

**Քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ և կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված, ինչպես նաև կրտսեր պաշտոնի հավաստագիր ունեցող անձանց ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ**

**1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության, նպաստների և դրամական այլ վճարների վարչության նպաստների և դրամական այլ վճարների բաժնի առաջատար մասնագետ (25/1-3.2-269)**

Մասնակցում է գործատուների կողմից Ծառայություն ներկայացված նպաստի գումարի փոխհատուցման պահանջների ուսումնասիրության և դրանց վերաբերյալ եզրակացությունների տրման աշխատանքներին: Մասնակցում է Ծառայության աշխատակազմի տարածքային բաժինների կողմից՝ ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման և վճարման գործընթացների ուսումնասիրության և և դրանց վերաբերյալ եզրակացությունների տրման աշխատանքներին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն.

-«Պետական կենսաթոշակների մասին»», ««ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին»», ««Պետական նպաստների մասին»» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ 16.04.2018 / երեխայի խնամքի արձակուրդ/:**

**2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Դավթաշենի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ (25/1-3.2-350)**

Համապատասխան ծրագրային գործիքների միջոցով մշակում է Ծառայության կողմից նշանակվող կենսաթոշակ, նպաստ, պարգևավճար և այլ դրամական վճարներ (այսուհետ՝ կենսաթոշակ) նշանակելու, վերահաշվարկելու և Ծառայության իրավասությունների շրջանակի մեջ մտնող մյուս դիմումները (այսուհետ՝ դիմում): Համապատասխան ծրագրային գործիքների միջոցով դիմումում և կից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը և փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ

իրավական ակտերով սահմանված կարգով ներառում է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն.

-<<Պետական կենսաթոշակների մասին>>, <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և պետական կենսաթոշակային համակարգի <<էլեկտրոնային կենսաթոշակ>>, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, ծննդյան միանվագ նպաստ, <<Մայրության նպաստ>> և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողություններ

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ 16.11.2017 / հղիության, ծննդաբերության արձակուրդ/:**

**3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի <<Եղեգնաձոր>> սպասարկման գրասենյակի առաջատար մասնագետ (41-3.3-290)**

Ընդունում է անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման նպատակով Գրասենյակ տրվող դիմումները և դրանց կից ներկայացվող փաստաթղթերը և սահմանված ժամկետներում այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերը տրամադրում է դիմումատուներին: Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ներկայացված պայմանագրերի կողմերի ստորագրությունների իսկության ճանաչման աշխատանքները:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն.

-<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ 06.01.2019 / երեխայի խնամքի արձակուրդ/:**

**4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի Տաշիրի սոցիալական աջակցության տարածքային գործակալության գլխավոր մասնագետ (65-3.2-35)**

Կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները: Ներկայացնում է առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ: Պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն.

-<<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Սոցիալական աջակցության մասին>>, <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը և սոցիալական աջակցություն հայցող կամ սոցիալական աջակցություն ստացող անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվության տիրապետում.

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և ընտանիքների անապահովության գնահատման օՆպաստ, սոցիալական դեպքի վարման, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողություններ:

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ 16.01.2020 / Երեխայի խնամքի արձակուրդ/:**

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2017 թվականի օգոստոսի 24-ը՝ ժամը 15:00**

**Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Խորհրդի աշխատակազմ (ք.Երևան, Տեղյան 89, հեռ. 011 52-24-61)**

**ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ**